# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոս Ամենայն Հայոց մայիսի 25-ին ընդունեց այցելությունը Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասի ներկայացուցիչ, Մելոյայի Եպիսկոպոս գերաշնորհ Տ. Էմիլիանոս Տիմիադիսի:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և գերաշնորհ Տ. Էմիլիանոս Եպիսկոպոսի միջև Վեհարանում տեղի ունեցավ ջերմ զրույց, սրտագին մթնոլորտում:

Մայիսի 26-ին սրբազան հյուրն այցելեց Ս. Գեղարդի վանքը, Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի տաճարները, Զվարթնոցը և այլ ուխտավայրեր:

Մայիսի 27-ին, կիրակի օր, գերաշնորհ Տ. Էմիլիանոս Եպիսկոպոսը Մայր Տաճարում ներկա եղավ հանդիսավոր սուրբ պատարագին: Նույն օրը Վեհափառ Հայրապետի շքախմբի հետ Սրբազան հյուրը ներկա գտնվեց Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված պաշտոնական հանդիսության Պետական օպերային թատրոնում:

Մայիսի 28-ին գերաշնորհ Տ. Էմիլիանոս Սրբազանը մեկնեց դեպի Կիև:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՌԱ-4830
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԷՄԻԼԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՏ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԹԵՆԱԳՈՐԱՍԸ
ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ



ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Նկարիչ՝ Ա. ԳԱԳՅԱՆ
(Արժանացել է երրորդ մրցանակի)